ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 փետրվարի 2024 թվականի N 195 - Ա

ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 1159-Ն որոշման 4-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա՝ ««Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի, Շիրազի փողոցի NN 25, 26, 27, 33 և 34 հասցեներում, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքի «Վարպետաց» թաղամասի, Երիտասարդության փողոցի NN 1, 2, 57 և 58, 1-ին փակուղի NN 2, 4 և 6, 3-րդ փակուղի N 1, 4-րդ փակուղի N 6 հասցեներում և Երևանի Թբիլիսյան խճուղի 3/14 հասցեում գտնվող անշարժ գույքերը, դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը և շինությունները (շենքի ջեռուցում, ներքին գազամատակարարում և տաք ջրամատակարարում, ինչպես նաև շենքի

արտաքին և ներքին գազամատակարարում, անհատական ջեռուցում, տաք ջրամատակարարման համակարգերի կառուցում և տարածքի բարեկարգում) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 4-ի N 762-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի Ջեյթունի փողոց 53 հասցեում գտնվող անշարժ գույքը, դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը որպես սոցիալական բնակարանային ֆոնդ՝ դրա նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով՝ համաձայն N 2 հավելվածի:

3. «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Բաղաբերդի 27 հասցեում գտնվող անշարժ գույքը, դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը որպես սոցիալական բնակարանային ֆոնդ՝ դրա նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2024 թվականի օգոստոսի 1-ը օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) ապահովել սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված անշարժ գույքերի որակավորման վկայական ստացած անձի կողմից չափագրման և անշարժ գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների իրականացումը՝ հիմք ընդունելով չափագրման փաստացի արդյունքները՝ աշխատանքների հետ կապված ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացված միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո ապահովել սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված անշարժ գույքերի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը և անհատույց օգտագործման իրավունքով պայմանագրերի կնքումը՝ հիմք ընդունելով անշարժ գույքերի փաստացի չափագրման և անշարժ գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում նշված տվյալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ